

պէս բռնադատուած էին իսլամանալ ժԸ դարուն: Բոյս չէ այցելած այս հովիտները. բայց կ'անուանէ զլիաւոր ձորին քանի մը զիւղերն այն կարաւանուղւոյն՝ որ հոս ծովէն ելելով բարձր լեռնողը՝ կ'երթայ երկու օրւան մէջ զէպ ի Բաբերդ (Բոյս, էջ 4—5): Բանասէր մը՝ Ս. Հայկունի այցելած է այս հայ-մահմետական գաւառը, հաւաքելով ազգագրական նիւթեր, մանաւանդ ի Թորոսլի¹ 1867—1868/ն, եւ ի Փերվան (Կիպերտ Pervana) 1878/ն²: Արդ Ս. Հայկունի այս մահմետականաց մէջ ինք զինքը իբր հարազատ զիւղերու մէջ կը գտնէր, ամենայն ինչ հայ՝ բարքն ու կենցաղն եւ հայերէն լեզուն՝ մեծէն մինչեւ փոքր: Այվէն զիւղէ՝ «աշխ (= աշուղ) Վարդան», երգչի մը յօրինած հայերէն երգերը, յատկապէս պարերգերը կ'երգէին հարսանիքներու ատեն, մանաւանդ ի Թրէշոր, (այժմ՝ Ծիճակ, Կիպերտ՝ Simla): Անցողակի նշանակենք

¹ Բ-ի՝ Dorosli, Կէրէր՝ Toroslu, բուն «Ս. Թորոս»:

² Ս. Հայկունի. «Կորած եւ մոռցուած Հայեր. Սեւ-Գեառացիք». ի Թերթին «Արարատ. ԷջԺ. 1895. էջ 239—243 եւ 293—297. բունի մահմետականացման մասը՝ հմմտ. նաեւ Բ. Ստանբուլու եւ Հր. Աճառ-Ին. «Հայոց նոր վիաները. 1155—1843», ԷջԺ. 1903. էջ 702—709. Տէր Կարապետ քահանայ Թորոսլիցի»: